ԱՎՍՏՐԱԼԻԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՄԻՆԻՍՏՐԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

1987 թ. դեկտեմբերի 5-ին ՀՍՍՀ արտաքին գործերի մինիստր Ա. Մկրտչյանի ուղեկցությամբ Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեց Ավստրալիայի արտաքին գործերի և արտաքին առևտրի մինիստր տիար Ուիլյամ Հեյդենը՝ իր շքախմբով: Տրդատա Դռան մոտ հյուրերին դիմավորեց ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ տիար Ստեփան Վարդանյանը: Հատկապես այս առիթով Մայր Աթոռ ժամանած Ավստրալիայի հայոց թեմի առաջնորդ Տ. Աղան եպս. Պալիոզյանը պատվարժան հյուրին առաջնորդեց Մայր տաճար, որտեղ մանրամասն բացատրություններ տվեց Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի պատմության մասին: Հյուրերը այցելեցին նաև Մարի և Ալեք Մանուկյան Գանձատուն:

Վեհարանի ընդունելությանց սրահում մեծարգո հյուրին իր շքախմբով ընդունեց Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը: Բարեկամական ջերմ մթնոլորտում խոսվեց Ավստրալիայի հայկական գաղութի, ժողովուրդների մշակութային շփումների ընդարձակման անհրաժեշտության, նրանց միջև քաղաքական փոխըմբռնման և մանավանդ համաշխարհային խաղաղության ձեռք բերման համար Քրիստոսի Եկեղեցու դերի մասին: Տիար Ուիլյամ Հեյդենը գոհունակությամբ նշեց, որ Ավստրալիայի հայերը, իբրև երկրի հավատարիմ և լիիրավ քաղաքացիներ, իրենց կարևոր լուման են ներդնում Ավստրալիայի տնտեսական և մշակութային զարգացման մեջ:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԱՎՍՏՐԱԼԻԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՄԻՆԻՍՏՐ ՈՒԻԼՅԱՄ ՀԵՅԴԵՆԻ ՀԵՏ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ